



Դեկտեմբեր 1991

ՀԱՅԲ Հաստատությունը սույն տեղեկագրի միջոցով հրատարակում է իր գիտահետազոտական-ծրագրային աշխատանքների արդյունքներն ու իր տարբեր հանձնախմբերի ուսումնասիրությունների եւ տեսակետների քննարկման եզրակացությունները: Տեղեկագրում տեղ են գտնում նաեւ ՀԱՅԲ Հաստատության հետ գործակցող գիտահետազոտական հաստատությունների ու անհատ մասնագետների աշխատություններ:

# ՀԱՅԲ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԲ Հաստատության կոչումն ու նպատակը կայանում է հայ ազգային գոյատեման եւ զարգացման համար ամենակենսական նշանակություն ունեցող գաղափարները, կարիքներն ու խնդիրները ըմբռնելու, վերլուծելու եւ դրա հիման վրա՝ տարբեր բնագավառների ազգային ամենաբարենպաստ քաղաքականությունները առաջարկելու մեջ:

ՀԱՅԲ Հաստատությունը, իր սկզբունքի համաձայն, ազգային խնդիրներին մոտենում է գիտական օբյեկտիվությամբ եւ համահայկական չափանիշով ու հեռանկարով եւ բացարձակապես զերծ է որեւէ հատվածական շահագրգռվածությունից եւ կամ ազդեցությունից:

ՀԱՅԲ Հաստատության գործունեության հիմնական մասը կազմում է՝  
ա) Հայ ազգային ամենակենսական գաղափարների ու խնդիրների բարձրացման, հստակեցման եւ դրանց գործնական լուծման համար՝ գիտահետազոտական ծրագրային աշխատանքների կատարումը, գործակցելով համապատասխան գիտահետազոտական հաստատությունների եւ անհատների հետ:

բ) Այդ աշխատանքների արդյունքները հայության տարբեր հատվածներին, շրջանակներին ու խավերին մատչելի դարձնելը՝ տարբեր մակարդակներով եւ ձեւերով:

ՀԱՅԲ Հաստատությունը հիմնադրված է եւ ղեկավարվում է, եւ կամ աջակցություն է գտնում հայության ճակատագրով մտահոգ եւ կյանքի այլազան բնագավառներում եական փորձառությամբ, տարբեր վայրերում ապրող անձանց կողմից:

ՀԱՅԲ Հաստատությունը որեւէ ձեւով չի կապված, չի ազդված ու առավել եւս չի ղեկավարվում որեւէ քաղաքական, պետական կամ այլ նման կազմակերպության կողմից:

ՀԱՅԲ Հաստատությունը՝ ազգային շահերին հետեւող, գիտահետազոտական ծրագրային բնույթի գործունեությամբ, շահույթ ստանալու նպատակ չիետապնդող, լրիվ անկախ ընկերակցություն է:

### ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

ՀԱՅՔ Հաստատության տեղեկագրի ելրորդ համարում լույս էր տեսել թիվ 1 ծրագիրը՝ բաղկացած երկու հիմնա-  
ժանցքային նյութերից՝ Ազգային Հոգեբարոյագիտությունն եւ  
Ազգային Գաղափարախոսություն:

Ի կատարումն այդ ծրագրի, ՀԱՅՔ Հաստատության  
ազգային հոգեբարոյագիտական եւ գաղափարախոսական  
հարցերի հանձնախումբը 1991 թվականին Լոս Անջելեսում  
անցկացրեց մի խորհրդաժողով, որի նյութն էր՝ «Հայության  
հոգեբարոյական, ընկերային եւ գաղափարախոսական հարցեր  
ու երեւոյթներ»:

Խորհրդաժողովի մասնակիցները տարբեր բնագավառների  
մասնագետներ էին, ներառյալ՝ հոգեբաններ, բժիշկներ, հա-  
սարակագետներ, մանկավարժներ՝ բոլորն էլ թե՛ Հայաստանի,  
եւ թե՛ Սփյուռքի կյանքի փորձառությամբ:

Ինչպես նշված էր խորհրդաժողովի ծանուցման մեջ, այն  
հետապնդում էր հետեւյալ նպատակները՝ ա) պարզաբանել եւ  
զննահատել հայության տարբեր հատվածների հոգեկան, բա-  
րոյական եւ որոշ տեսակետից՝ ընկերային իրավիճակը. բ)  
բնորոշել ազգային կյանքի եւ, մասնավորապես, ազգային  
կենսական խնդիրների իրագործման վրա ազդող հայկական  
հասկացողությունները, սովորությունները, երեւոյթները, ան-  
հատական եւ հավաքական վերաբերմունքն ու արարքները:

Խնդրի տարողունակությունը, մի կողմից, եւ խորհրդաժո-  
ղովի՝ իր տեսակի մեջ առաջինը լինելը, մյուս կողմից, տվեցին

այն կանխատեսելի արդյունքը, որ մասնակիցների ելույթնե-  
րըն, արտահայտելով յուրաքանչյուրի անհատական կարծիքը,  
մտորումները այլեւայլ ազգային հարցերի վերաբերյալ, հա-  
մակարգված չէին ըստ հանձնախմբի ծրագրային կետերի:

Այնուհանդերձ, արտահայտված մտքերը ընդհանուր առ-  
մամբ կարելի է արժեքավոր նկատել այն ակնկալությամբ, որ  
դրանք կարող են որպես մեկնակետ ծառայել՝ ազգային  
հոգեբարոյական եւ գաղափարախոսական հարցերի ավելի  
համակարգված ուսումնասիրության համար:

Ըստ խորհրդաժողովի մասնակիցների համընդհանուր կար-  
ծիքի, հայրենաբնակ հայության եւ սփյուռքահայության հո-  
գեբարոյական վիճակը զգալիորեն տարբեր է, եւ միայն  
խառնվածքի, նկարագրի որոշ գծեր կան, որ համահայկական  
բնույթ ունեն:

Ընդհանրապես, մասնակիցների ելույթները ավելի շատ  
հաստատումներ էին պարունակում, քան առաջարկներ, սա-  
կայն, պետք է ենթադրել, որ այդ հաստատումներն իսկ  
օգտակար են հայության հոգեբարոյական, ընկերային եւ  
գաղափարախոսական հարցերի պարզաբանման, այդ թվում  
եւ՝ ազգային ինքնաճանաչման եւ ինքնագնահատման համար:

Ստորեւ բերված են խորհրդաժողովի ելույթների առանց-  
քային մտքերը, զննահատականները, հարցադրումները:

1. Հոգեբարոյագիտական եւ գաղափարախոսական հարցե-  
րի արծարծումն ու քննարկումը, որպես հիմնական նպատակ,  
պետք է հետապնդի յուրաքանչյուր հայի ազգային պարտա-  
ճանաչության, քաղաքացիական պարտքի զգացման բարձրա-  
ցումը եւ բարոյական արժեքների գիտակցումն ու կիրառումը:

Խորհրդային ռեժիմը 70 տարվա ընթացքում այս առումով ավերիչ ազդեցություն է ունեցել, որի մասին, սակայն, համարյա թե չի խոսվում, հավանաբար՝ ներքին քաղաքական ցկատառումներով: Մեծամասամբ միայն նշվում են խորհրդային կարգերի այլ՝ քաղաքական, տնտեսական նշանակություն ունեցող բացասական հետեւանքները: Ազգային գիտակցության պակասի մյուս պատճառը՝ դարեր շարունակ պետականությունից զուրկ լինելու վիճակն է՝ իր տարբեր հետեւանքներով:

2. Հայ մարդուն հատուկ է կենտրոնախույս, անկարգապահ, անիշխանական եւ խիստ անհատականությամբ դրսևորվող ցկարագիրը. որպես անհատներ՝ փայլում ենք, որպես հավաքական ուժ՝ տկար ենք: Նմանապես, սփյուռքահայերը իրենց ապրած երկրների օրինակելի քաղաքացիներ են, բայց հայկական ազգային պարտաճանաչության գիտակցությանը քչերն են հասու:

3. Հոգեբարոյական հարցերը բարձր գիտական հիմքերի վրա դնելու համար պետք է սահմանել միջին (վիճակագրական) հայի ցկարագիրը, ինչպես նաեւ հայի տոհմիկ ազգային կերպարը, համեմատել դրանք, բացահայտել բացասական տարբերությունները եւ ուղիներ փնտրել՝ դրանք վերացնելու համար:

4. Հայի տոհմիկ ազգային կերպարը, որի հատկանշական կողմը՝ անսակարկ ցկիրվում է ազգին, ամենչվում է ազգային ընտրանու (էլիտա) գաղափարի հետ: Ըստ ամենայնի, պետականությունը կորցնելուց հետո մենք աստիճանաբար զրկվել ենք նաեւ ընտրանուց եւ այժմ պետք է այն վերաեղծենք՝

առաջին հերթին ի ցկատի ամենելով հոգեբարոյական եւ կրթական չափանիշները:

5. Հայրենաբնակ հայության պարագային, խորհրդային ռեժիմը կյանքի նորմ էր դարձրել բազմաթիվ բացասական հատկություններ, ներառյալ՝ մատնությունն ու զրպարտությունը, կաշառակերությունն ու գողությունը (վերջինս «քաղաքավարիորեն» կոչվում էր «հասարակական ունեցվածքի յուրացում») եւ դրանց ուղեկցող սուտը, կեղծիքը, անհանդուրժողականությունն ու բռնությունը: Թերեւս, մարդկության պատմության մեջ չի եղել մի այլ ժամանակաշրջան, որի համար «մարդը մարդուն գայլ» արտահայտությունը ավելի դիպուկ լիներ, քան խորհրդային մղձավանջային կարգերի օրոք: Սակայն այսօրվա ամենատական խնդիրն է, թե խորհրդային կարգերի վերացումից հետո ի՞նչ չափով եւ ինչքա՞ն ժամանակում կվերանան դրանց կատարած հոգեբարոյական ավերումների հետեւանքները, եւ ինչ կարելի է անել այդ վերացման գործընթացը արագացնելու համար. ովքե՞ր պիտի լինեն դրա նախաձեռնողները, ուղղություն տվողները, համադրողները եւ, վերջապես, պատասխանատուները, դերակատարները՝ իշխանություն՞նը, մտավորականություն՞նը, հոգեւորականները: Խորհրդակցությունն այն եզրակացության եկավ, որ ՀԱՅԶ Հաստատությունը կարող է զգալիորեն նպաստել այս գործին, մասնավորապես՝ համապատասխան նյութեր հրատարակելով:

6. Ներքին ու արտաքին սփյուռքահայության պարագային, մանավանդ՝ ամերիկահայության, որը ամենաստվար հայկական գաղութն է, դժվար է խոսել որոշակի ազգային

նկարագրի վերակերտման մասին, քանի որ նրա առանձին հատվածները խիստ տարբերվում են: Այս նկատառումներով, թերեւս, պետք է մեր ջանքերը ուղղել դեպի երիտասարդությունը, մասնավորապես՝ սկսելով հայկական դպրոցների աշակերտությունից: Կարծիք հայտնվեց, որ դպրոցների մեջ դասի ձեռով մտցվի ազգային ծառայության գաղափարը, օրինակ՝ համայնքի համար օգտակար աշխատանքների մասնակցությունը, որպես յուրաքանչյուր հայ երիտասարդի առաջնային պարտականություններից մեկը, եւ այս միջոցով դպրոցն ավարտելուց հետո երիտասարդը ավելի գործնականորեն ներգրավվի հայկական կյանքի մեջ:\*

7. Օտար երկրներում հայի ազգային վարքագիծը բնորոշելիս՝ նշվեց, որ թեւեւ կան հայեր, որ չեն թաքցնում իրենց հայկական ինքնությունը, նույնիսկ հպարտանում են դրանով եւ բացահայտորեն օգնում են իրենց հայրենակիցներին, այնուամենայնիվ ակնհայտորեն գոյություն ունի հայ լինելու ստորագայության բարդույթը, թեւեւ թվում է, թէ դա աստիճանաբար վերանում է: Սրա արագ հաղթահարման ամենագործուն միջոցը, թերեւս, այն է, որ հայը պետք է կարողանա պարծենալ ոչ այնքան իր ազգի անցյալով, համաշխարհային քաղաքակրթության մեջ նրա երբեմնի ներդրումով, այլ առավելապես իր հայրենիքի ներկայով, իսկ դրա անհրաժեշտ պայմաններից է ժողովրդականացումը ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի: Իրապես ժողովրդավարական Հայաս-

\* Այդ առնչությամբ, սակայն, չարժարժվեց, թե ինչպես պետք է վարվել ամերիկահայ երիտասարդության ավելի բան իննսուն տոկոսի հետ, որը տարբեր պատճառներով չի հաճախում հայկական դպրոց:

տանը միայն կարող է լինել ամեն հայի պարծանքի առարկան:

8. Մեր օրերում ընթերցանությունը անընդհատ նահանջ է ապրում, մանավանդ՝ երիտասարդության մեջ եւ հատկապես՝ հայերեն լեզվով գրքերի: Փաստորեն, գիրքը արտամղվել է հեռուստացույցի եւ տեսաերիզի կողմից: Այս առումով հայեցի դաստիարակության ամենահզոր միջոց կարող էին լինել հատուկ պատրաստված տեսաերիզները, ընդ որում ոչ միայն հայերեն լեզվով եւ ոչ միայն հայկական կյանքի մասին: Նշվեց, որ մենք սաստիկ վշտանում ենք, որ մեր երիտասարդ սերունդը, հեռուստացույցին զամված, կեսժամյա «օժառային օպերաներ» է դիտում, մեծահասակների մեծ մասն էլ՝ թուրքական կենցաղային տեսաերիզներ, բայց ոչինչ չենք անում դրանց փոխարեն որեւէ հայկական բան հրամցնելու համար:

9. Մինչդեռ համընդհանուր ճանաչում ստացած փաստ է, որ ճարտարարվեստի ներկա հսկայական առաջադիմությունը անհնարին կլինեւ առանց գիտական նվաճումների, մասնավորապես՝ համակարգիչների օգտագործման, հասարակական խնդիրների մեջ նման մոտեցումը, մասնավորապես՝ համակարգային վերլուծությունը (system analysis) իսպառ բացակայում է: Դրա ամենապարզ օրինակը կարող է լինել այն, որ չկան ժողովրդագրական եւ ընկերաբանական (սոցիոլոգիական) տվյալներ սփյուռքների եւ նրանց տարբեր հատվածների մասին, իսկ հայության քանակը գնահատվում է ... հարյուր հազարների ճշտությամբ: Այս բացը լրացնելու համար տարվելիք աշխատանքները կարելի է բաժանել հետեւյալ փուլերի. տվյալների հավաքում («տվյալների դրամատան»

ստեղծում), մոդելավորում, համակարգային վերլուծություն եւ այլն:

Երկօրյա խորհրդակցության վերջում որոշվեց, որ վերոհիշյալ եւ հարակից այլ խնդիրները ՀԱՅՔ Հաստատության ազգային հոգեբարոյական եւ գաղափարախոսական հարցերի հանձնախումբը առանձին-առանձին քննարկման ենթարկի, խնդիրները բարձրացվեն հոդվածների ձեւով եւ հրատարակվեն ՀԱՅՔ Հաստատության տեղեկագրի համարներում եւ այլուր: Միաժամանակ նշվեց օգտակարությունը տարվող գործնական աշխատանքների, որ ուղղված են հիմնական ուսումնասիրություններ սկսելու ինչպես ներքին ու արտաքին սփյուռքների անհատ մասնագետների ներգրավումով, այնպես էլ Հայաստանի համապատասխան հաստատությունների հետ գիտական համագործակցությամբ եւ ուղղակի համատեղ ծրագրերի կատարման միջոցով:

\* \* \*

Լոս Անջելեսում կայացած խորհրդաժողովի տրամաբանական շարունակությունը դարձավ Երեսնում տեղի ունեցած հավաքը, որի մասնակիցները՝ Երեսնի համալսարանից ու ակադեմիական ինստիտուտներից, Հայաստանի Հանրապետության եւ Սփյուռքի հետ կապերի կոմիտեից մի խումբ ազգագրագետներ, ընկերաբաններ, փիլիսոփաներ, պատմաբաններ, տնտեսագետներ, ծանոթանալով ՀԱՅՔ Հաստատության թիվ 1 ծրագրին եւ հավանություն տալով այդ ծրագրի

հիմնադրույթներին, փորձեցին գոնե «առաջին ընթերցմամբ» քննարկել համահայկական նշանակություն ու արժեք ունեցող հոգեբարոյական խնդիրների շրջանակը, պարզաբանել, թե ո՞րն է արդյոք մտավորականության դիրքորոշումը այդ խնդիրների վերաբերյալ, ինչպե՞ս է գնահատում մտավորականությունը իր մոտ անցյալը, ի՞նչ հետետություններ է արել այդ անցյալի դասերից, ի՞նչ դեր է հատկացնում իրեն այսօրվա կյանքում, ու՞նի արդյոք վաղվա ծրագրեր, եւ եթե ունի, ապա ինչպե՞ս է իրագործելու դրանք:

Հավաքը ընթանում էր մտքերի, կարծիքների փոխանակման ձեւով, մասնակիցները արտահայտում էին իրենց անձնական տեսակետները, քննարկելով այս կամ այն հարցը առաջին հերթին մասնագիտական տեսանկյունից: Թեպետեւ ելույթները միշտ չէ, որ փոխկապակցված էին, միշտ չէ, որ ամփոփ, ամբողջական տեսակետ էին ներկայացնում, իսկ երբեմն էլ՝ պարզապես սոսկ զգացմունքային բնույթ ունեին, այնուհանդերձ նրանց ամփոփումը թույլ տվեց առանձնացնել մի քանի դրույթ, որոնք, ըստ էության, կազմում էին գրեթե բոլոր ելույթների հիմնական բովանդակությունը: Ահա այդ դրույթները:

1. Ընդունելով, որ մտավորականության կարող ուժերը միշտ պետք է պատրաստ լինեն համագործակցելու ազգի իշխանությունների հետ՝ վերջիններիս օգնելու նպատակով. ընդունելով, որ ցանկացած պահին եւ ցանկացած իշխանության օրոք ազգի կացությամբ մտահոգված մտավորականությունը պետք է ունենա գիտականորեն հիմնավորված առաջարկներ՝ ծառացած խնդիրների լուծման համար, հարկ է խոստովանել,

որ այսօր չի կարելի պարծենալ ո՛չ մտավորականությանը համախմբող պատրաստականությամբ, եւ ո՛չ էլ վերոհիշյալ խնդիրների վերաբերյալ որեւէ փայլուն գիտական նվաճումներով: Ավելին. մինչեւ օրս շատ եւ շատ «գիտական» աշխատություններ պարզապէս ծառայել են պաշտոնական գաղափարախոսության արդարացմանը, անգամ՝ հիմնավորմանը: Մասնակիցներից ոմանք, իրենց տեսակետը հայտնելով, նշեցին, որ խորհրդային կարգերի օրոք մտավորականությունը չկարողացավ հաղթահարել բարդ ու վտանգավոր պայմանները ու կատարել իր առաքելությունը. չորեք իր առջեւ պետականություն կառուցելու գաղափարը, չսկսեց ազդել այդ գաղափարով:

2. Մենք բացատրել ենք մեր դժվարությունները թշնամիների առկայությամբ ու ազդեցությամբ, փնտրել եւ գտել ենք արտաքին թշնամիներ, մինչդեռ համար մեկ թշնամին եղել է մեր տգիտությունը, անտարբերությունը, ազգային ըմբռնումով՝ հասարակական-քաղաքական անբարոյականությունը: Մեծամտաբար հոգ չտանելով ինքներս մեզ ճանաչելու մասին, մենք այդ հնարավորությունը տվել ենք հակառակորդին:

3. Չդիմադրելով մտքի եւ հոգու ծուլությանը, մենք թույլ ենք տվել աղավաղելու մեր պատմական հիշողությունը: Ըստ վերջերս կատարած ուսումնասիրությունների, մենք, գրեթե զուրկ լինելով ինֆորմատիվ պատմական հիշողությունից, մեր գեների մեջ ենք կրում դրա ազդեցությունը: Զարմանալի է, որ հայության համար չափազանց մեծ կարեւորություն ունեցող այս երեւոյթը մինչեւ օրս չի արժանացել մեր գիտական շրջանակների ուշադրությանը: Ինչու եւ ինչպե՞ս են մի ազգի

մեջ համատեղվում չնվազող տագնապը եւ մեկուսի մնալու, յուրահատուկ մնալու միտումը: Գուցե հենց ս՞ա է, որ բացասական ազդեցություն է գործում, առաջին հերթին, էթնոսի ներսում: Եթե ազգն ասում է. մենք ենք, որ կանք, յուրաքանչյուրն էլ կասի. ես եմ, որ կամ:

Վերը նշված դրույթները փոխկապակցված եւ միավորված են մեկ ընդհանուր մտքով կամ, ավելի ճիշտ՝ մտահոգությամբ. ակնհայտ է, որ մեր գործերը վատ են ընթացել եւ վատ են ընթանում: Ուստի՝

ա) ժամանակն է, որ ճանաչենք ինքներս մեզ, գիտակցենք, թե ինչ հոգեբարոյական արժեքներ ենք կորցրել, ինչքանով է աղավաղվել մեր ազգային նկարագիրը, ինչպիսին է այն այսօր, ինչ միջոցներով, ինչպէս կարող ենք վերագտնել մեր արժեքները, կիրառել դրանք մեր վերաբերմունքով ազգային-հասարակական, կենցաղային ու ընտանեկան հարաբերություններում:

բ) հարկ է հստակորեն սահմանել լուրջ ուսումնասիրություն պահանջող առաջնահերթ խնդիրները, սահմանազատելով առաջնայինն ու երկրորդականը:

գ) ժամանակն է այդ խնդիրների լուծմանը ծառայեցնել ազգի կարող ուժերը, միավորել ազգագրագետների ու փիլիսոփաների, պատմաբանների ու բանասերների, հոգեբանների ու տնտեսագետների - բոլոր գիտնականների շնորհքն ու եռանդը, բոլոր գիտությունների հնարավորությունները:

Ժամանակն է վերջապէս սովորելու նախապէս տեսնել գալիքը, նախապէս ծրագրել, կազմակերպվել եւ նախապատրաստվել դիմագրավելու թե՛ դրական, եւ թե՛ բացասական զարգացումները:

Ելնելով իր թիվ 1 ծրագրի հարցադրումներից, ՀԱՅՔ Հաստատությունը դիմեց հայաստանյան որոշ մասնագետների՝ կարծիք հայտնելու Հայաստանի բնակչության արդի հոգեբարդական իրավիճակի եւ քաղաքական մշակույթի ու կազմակերպվածության մասին:

Ստորեւ բերված են նրանց հակիրճ կարծիքները:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Ժամանակակից հայի գիտակցությունը խիստ դիցաբանված\* է, եւ սա, մասնավորապես, բնորոշվում է ծայրահեղ կենտրոնացմամբ հայ դատի եւ պատմական անարդարության վրա: Մեծապես պայմանավորելով շարունակական հոգեբանական ընկճվածությունը՝ հիշյալ պարագաները միեւնույն ժամանակ դառնում են այն հզոր եռանդուժը, որ համախմբում է ազգը ընդհանուր նպատակի շուրջ: Սակայն նման եռանդուժը միշտ չէ, որ դրական դեր է խաղում, քանի որ թե՛ «թամբում», եւ թե՛ «սանձահարում» է մտածողությունը. առաջ է մղում այն, բայց միմիայն ընդունված դիցաբանությունների սահմաններում: Բացի այդ, նման բնույթի կենտրոնացումը լիովին սպառում

\* Տեղեկագրի սույն համարում գետնոված նյութերի հեղինակներից շատերը օգտագործում են «դիցաբանված գիտակցություն», «դիցաբանույթ» հասկացությունները, որոնք պետք է ընկալել ոչ թե ընդհանուր, տարածված, այլ հումանիտար գիտություններում ընդունված խմատով: Այսպիսով, որպես գիտական տերմին, «դիցաբանույթը» փիլիսոփայական, իրավական, կրոնական, բարոյական բնույթի բաղադրիչներից բաղկացած մի այնպիսի միասնություն է, որը ձևավորում է տվյալ հանրության կեցվածքը, հոգեբանությունը, արժեքների համակարգը: Համապատասխանաբար, «դիցաբանացված գիտակցությունը» ենթադրում է դիցաբանությունով ղեկավարվող, դիցաբանությունների մեծ ազդեցությունը կրող գիտակցություն: (Խմբ. կողմից)

է մարդկանց ուշադրությունը, որի հետեւանքով նրանք, չգիտակցելով իրական փոփոխությունների բուն, խորքային էությունը, պարզապես չեն կարողանում համապատասխանաբար արձագանքել այս կամ այն վտանգներին եւ դրանցից բխող հասարակական կարիքներին: Ընդհանուր առմամբ, ազգի ներքին դիրքորոշումը ուղղված է անբարենպաստ պայմաններին դիմադրելու ինչ-որ չափով կայուն մակարդակի հաստատմանը: («Փա՛նք Աստծո, այս դժվարությունն էլ հաղթահարեցինք » : ) Այդ մակարդակը առայժմ պահպանվում է, սակայն 1988—ի թռիչքը կրկնելու ներքին պատրաստակալություն դեռեւս չկա:

Ինչ վերաբերում է քաղաքական մշակույթին, ապա իշխանությունն ու ժողովուրդը կապող միջանկյալ օղակի՝ իրազեկ քաղաքագետների եւ ղեկավարների բացակայությունը հանգեցնում է նրան, որ իշխանությունն ընկալվում է որպես համաժողովրդական գործ, ուստի եւ միանգամայն բնական է, որ իշխանությունների ցանկացած գործողություն, լինի դա հարկադրական քայլ, թե մարտավարական խուսանավում, չափազանց հիվանդագին է ընդունվում - մանավանդ, որ կասկածի տակ են առնվում իշխանությունների ձեռնհասությունն ու անկաշառությունը:

Չեն գործում նաեւ երրորդ եւ չորրորդ իշխանությունները՝ դատական իշխանությունն ու զանգվածային լրատվական միջոցները: Դա հետեւանք է այն բանի, որ Խորհրդային միության փլուզումից հետո իր բարոյական ուղեցույցները կորցրած հասարակությունը շփոթված եւ ապակողմնորոշված է: Հին արժեքները դուրս են մղվել, նորերը՝ չեն ձեւավորվել:

Մարդիկ ի վիճակի չեն տարբերակել իրավացին ու անիրավը, արդարն ու անարդարը, հետեւաբար՝ արդարադատության եւ հասարակական վերահսկման ներքին պահանջը առայժմ չի հասունացել: Իրականում ժողովուրդն ու իշխանությունը կապող, ժողովրդի՝ կառավարմանը մասնակցելու իրավունքը ապահովող միջանկյալ օղակի դերը ստանձնում են քաղաքական կուսակցությունները, որոնք իրեց հերթին հենվում են հասարակության ընկերային եւ ինտենցիոնալ (նպատակներով, մղումներով պայմանավորված) հատկանիշներով տարբերակված խավերի վրա: Իսկ քանի որ արդի հայաստանյան պայմաններում նման տարբերակում առայժմ չկա, իսկ դա կնշանակի, որ չկան նաեւ դասական իմաստով՝ քաղաքական կուսակցություններ<sup>\*)</sup>, ապա բնական է, որ ժողովուրդը չի կարող լուրջ ազդեցություն գործել քաղաքական գործընթացների զարգացման վրա: Այսօր նրա ուժի եւ ազդեցության հիմնական աղբյուրները երկուսն են: Առաջինը՝ ընտրությունների ժամանակ իր ազատ կամքը հայտնելու հնարավորությունն է, որը դրսեւորվում է ոչ այնքան որպես վստահության քվե՝ ապագայի առումով, որքան որպես պատժամիջոց՝ արդեն իսկ արածի (կամ չարածի) համար: Այլ կերպ ասած, հոգեբանական շեշտը դրվում է ոչ այնքան արժանավորին ընտրելու, որքան անարժանին, վարկաբեկվածին չընտրելու վրա:

Լինելով ժողովրդի ամենաընդհանուր, վերացական ձեռնարկների արտահայտիչը (միասնական բարգավաճող Հայաս-

<sup>\*)</sup> Այս հարցը հանգամանորեն վերլուծվում է հաջորդ տեղեկագրում քերված «Հայաստանի քաղաքական կազմակերպությունները արդի փուլում»

հոդվածում:

տան), իշխանությունը որոշակի դրական ակտիվություն է ցուցաբերում արտաքին քաղաքականության ասպարեզում, ինչը չի կարելի ասել ներքին քաղաքականության եւ, մասնավորապես, տնտեսության ոլորտների մասին: Ցանկացած իշխանության տնտեսական քաղաքականությունը պետք է հիմնվի հասարակության որոշակի խավերի վրա, որոնք բացակայում են. բացակայում է նրանց գործունեության եռանդը, ձեռնարկչական եռանդը՝ բառիս ամենալայն իմաստով: Իշխանությունն ունի այլընտրանք. առաջին եւ, փաստորեն, իրականացվող ուղին՝ օլիգարխիկ սեփականաշնորհումն է, երբ տնտեսական հնարավորություններն ու լծակները հանձնվում են ձեռնարկությունների նախկին ղեկավարներին:

Այս ձեռք թույլ է տալիս պահպանել տնտեսության գործունեության գոհն նվազագույն մակարդակը, խուսափել քայքայման վտանգից, սակայն միեւնույն ժամանակ բերում է իր հետ բնակչության հիմնական զանգվածների լյումպենացման եւ նրանց՝ ձեռնարկչական գործընթացից երկարատեւ ու բացարձակ անջատման վտանգը: Չի բացառվում, որ սա կհանգեցնի նախ՝ ձեռնարկչության, որպես հասարակական երեւոյթի, որակական վատթարացմանը եւ ապա՝ արտագաղթի խիստ ակտիվացմանը: Երկրորդ ուղին՝ հնարավորին չափ հավասար մեկնարկային պայմանների ստեղծումը, եւս անվտանգ չէ, քանի որ կարող է բերել տնտեսության, թեպետեւ ժամանակավոր, բայց կտրուկ կազմալուծմանը, գոյություն ունեցող «տերերի» վերաջմանը: Այս դեպքում հնարավոր է, որ մեր տնտեսության առանց այն էլ աղետալի վիճակում վնասը այնքան էլ մեծ չլինի, եթե, իհարկե, անցումային շրջանում

հաջողվի պահպանել կառավարման կայուն, հաստատուն ձեւերը՝ գոնե կենսաապահովման հիմնական ոլորտներում: Այս պարագայում տնտեսությունը ավելի երկար վերածնման ճանապարհ կանցնի, սակայն այդ գործընթացը կհիմնվի հսկայական եռանդով՝ ժողովրդի նախաձեռնության վրա: Պետք է ենթադրել, որ կարելի է, խուսափելով ծայրահեղություններից, դիմել փորձագետներին եւ նրանց օգնությամբ մի փոխգիշերական տարբերակ մշակել: Ապա հնարավորին չափ արագ գործի դնել այն, նախապես լայն բացատրական աշխատանք անցկացնելուց հետո: Այս խնդրի լուծման որ ուղին էլ ընտրվի, ազգի գիտատեխնիկական ներուժի մի մասը ամեն դեպքում կմնա չներգրավված, քանի որ բնակչության այս խմբի գործունեությունը իմաստ կունենար միմիայն այն դեպքում, եթե կազմեր տեխնոլոգիաներ արտադրող զարգացած երկրի գիտական եւ տնտեսական կյանքի ներդաշնակ մասը: Հնարավոր է, որ այս մասնագետները գաստարբայտերների բախտին արժանանան - մի երեսույթ, որն, ի դեպ, նույնպես կարելի է ծառայեցնել Հայաստանի շահերին:

Եվ վերջում՝ ես մի դրույթ, որը պետք է դառնա առանձին ուսումնասիրության առարկա: Մեր՝ էթնիկական առումով՝ միատարր, սոցիալական առումով՝ չտարբերակված եւ տարածքային առումով՝ «կողպված» հասարակությունը պետք է խուսափի ես մեկ լուրջ վտանգից, որ կոչվում է քսենոֆոբիա՝ օտարավախություն, այլապես մենք դուրս կմնանք համաշխարհային եւ, մասնավորապես, եվրոպական հասարակական-մշակութային համատեքստից, կկորցնենք մեր արժեքային

ուղեցույցները: Մենք, ավաղ, ճապոնացի չենք, որ ( ի դեպ, առայժմ չորոշված ) արժեքների հիման վրա ստեղծենք հզորության եւ գերակշռության աղբյուր դառնալու ընդունակ կայուն պահպանողական հասարակական-մշակութային կադապար:

Մենք սրընթաց գնում ենք դեպի բարձրի անխուսափելի անկում, որը կանգ կառնի ամենաբարբարոսական ասիական մակարդակի վրա: Կայսրության օրոք դա տեղի չունեցավ, քանի որ ազգերի միջեւ սուր մշակութային պայքար կար, որը խրախուսվում էր կայսրության կողմից, որովհետեւ փոխարինում էր իրական քաղաքական մրցակցությանը: Հենց այդ ժամանակ էր, որ ձեռավորվեց մի բանաձեւ կամ այսպես կոչված դիցաբանույթ, այն է՝ «Հայաստանը՝ երկնքի տակ փռված մի թանգարան է»: Սա միանգամայն արգասավոր դիցաբանույթ էր, քանի որ վկայում էր հայերի՝ աշխարհի, երկրի եւ գալիք սերունդների առաջ կրած պատասխանատվությունը իրենց հայրենիքի համար: Նման դիցաբանական տարրը իր օբյեկտն է պահանջում, իսկ վերջինս վերացավ այն պահին, երբ քայքայվեց երկիրը, որի տարածքում էր միայն իմաստավորվում այդ դիցաբանույթը, այսինքն այն պահին, երբ Հայաստանը զկսեց ինքնուրույն քաղաքական կյանքով ապրել:

ԱՐԱ ՆԵՂՈՒՅԱՆ,  
թատերագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԿՈՂ  
ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ԵՎ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ժամանակակից հայի հոգեբարոյական նկարագիրը մեծապես պայմանավորված է պատմությամբ, հատկապես՝ վերջին տասնամյակների պատմական իրադարձություններով: Այն երկակի բնույթ ունի, քանի որ յուրաքանչյուր գաղափար բեւեռացած դրսևորումներ է ստանում: Մեր կարծիքով, դրանցից հիմնականը գոյատևման գաղափարն է, որն առաջին հերթին դրսևորվում է որպես հայ բնակչության ֆիզիկական պահպանման, ինչպես նաեւ տարածքային անվտանգության գաղափար: Ինչ վերաբերում է հայի հոգեբարոյական նկարագրին, որը պետք է բնորոշի հայությունը, որպես մի որոշակի մշակութային միասնություն եւ ամբողջականություն, ապա այստեղ գերիշխում է հայոց լեզվի պահպանման գաղափարը: Մտավորականության եւ ուսում ստացած երիտասարդության մեծ մասը «տառապում» է մշակութային պահպանողականությամբ, նկատվում է ավանդական (երբեմն՝ անգամ մինչքրիստոնեական) արժեքներին վերադառնալու, այդ արժեքները վերակենդանացնելու որոշակի միտում: Սրան համահունչ է մեկ այլ տարածված տեսակետ, որի կողմնակիցները համարում են, թե ազգի զարգացման առավել արդյունավետ ուղին մշակութային ինքնամեկուսացումն է, ազգային ինքնության հաստատումը բոլոր օտարածին երեւոյթները ժխտելու միջոցով: Կարծում ենք, նման ծայրահեղական գաղափարները աստիճանաբար կհաղթահարվեն: Համենայն դեպս, արդեն իսկ նշմարվում են որոշ հատկանիշներ,

որոնք խոսում են այն մասին, որ հասունանում է հոգեւոր զարգացման մի նոր փուլ, պահպանողականությունից, ինքնամեկուսացումից, մերժողականությունից դեպի սեփական, ավանդական եւ այլ մշակույթներին պատկանող արժեքների ստեղծագործ, արդյունավետ վերաիմաստավորում, դեպի նոր որակ, որը թույլ կտա, պահպանելով ազգայինը, հարստացնել այն ժամանակի ոգով: Մեր կարծիքով, հատկանշական է նաեւ այն, որ եթե դեռ վերջերս ազգային պատկանելության որակական չափանիշը հիմնականում (եթե ոչ միշտ) համարվում էր մայրենի լեզվին տիրապետելը, ապա այսօր միանգամայն իրական վտանգների քաջ գիտակցումը ի հայտ է բերում մեկ այլ կարեւորագույն չափանիշ, այն է՝ ժամանակակից հայի բարոյական նկարագիրը:

Գոյատևման գաղափարը դրսևորվում է նաեւ որպես անձնական գոյապահպանման գաղափար: Անձնական բարգավաճման ձգտումը արդարացվում է՝ որպես առանձին հայի կյանքն ապահովելու անհրաժեշտություն, իսկ հասկացությունների նման նենգափոխումը, երբ բարոյական չափանիշները դուրս են մղվում նյութական չափանիշով, բնականաբար, բերում է բազմաթիվ չարաշահումների:

Այլ ազգերի եւ պետությունների շարքում արժանի տեղը գտնելու անհրաժեշտությունը ստիպում է մեզ հաղթահարել մի զգացողություն, որը, թերեւս, կարելի է անվանել վասալական կախյալություն եւ որոշակի մշակութային ու քաղաքական երկրորդականություն: Երեւի թե, սա բացատրելի է. բավական է նշել պատմական իրադարձությունները, մեր ազգի փոքրաթ-

վությունն ու աշխարհաքաղաքական դիրքը: Չմոռանալ, սակայն, որ այս զգացողությունն ունի իր՝ դարձյալ երկակի բնույթ կրող շարունակությունը. մի կողմից՝ ինքնանվաստացում, մյուս կողմից՝ մեծամտություն, գոռոզություն: Այսուհանդերձ, պետք է նշել, որ այսօր մերժվում են եւ նման ծայրահեղությունները: Սա հուսադրում է, քանի որ, մեր խորին համոզմամբ, ազգային հպարտությունն ու արժանապատվությունը ոչ մի դեպքում չպետք է լինեն «բացառիկ», «եզակի ազգ» գաղափարի ածանցյալները:

Հայի առօրյա վարքագծի հիմնական սյուժեները վերլուծելով, կարելի է առանձնացնել հետեւյալ հանգուցային բաղադրիչները՝

ա) ընտանիքը, նրա բարեկեցությունը.

բ) շփման անմիջական (հաճախ՝ ընկերական) ոլորտի առկայությունը.

գ) հայության (ոչ միշտ հստակորեն գիտակցվող) գաղափարը:

Բոլոր այս բաղադրիչները դրսևորվում եւ իրացվում են սնապարծության բավականին ակտիվ մասնակցությամբ, ընդ որում՝ որոշակի պարագաներում, որոշակի իրավիճակներում իրացվող սնապարծության: Ասենք, գերադասելի է թանկարժեք մեքենա ձեռք բերել եւ դրանով իսկ տարբերվել ուրիշներից, քան հզոր ֆինանսական հնարավորությունների դեպքում՝ զգալ, որ կարող ես որոշ գաղափարներ իրականացնել. Այլ կերպ ասած, սնապարծության «թափը» առայժմ սահմանափակվում է «ես=ընտանիքս-շրջապատը» հարաբերակցությամբ, այսինքն, մարդու՝ իրեն հասարակության տարր զգալու ստորին մակարդակով: Հավանաբար, այս երեւույթը կարելի է բացատրել

կուտակած կապիտալի չափով, որն առայժմ այնքան մեծ չէ, որպեսզի ավելի բարձր մակարդակ ապահովի:

Թե՛ վերոհիշյալ եւ թե՛ բազմաթիվ այլ, սակայն, ցավոք, չհետազոտված հանգուցային բաղադրիչներին այսօր ավելանում են արցախյան հիմնահարցը, շրջափակումը, աղետի գոտու առկայությունը, շուկայական տնտեսության ձեւավորումը, հանգամանքներ, որոնք հայի ավանդական աշխատասիրության եւ ձեռներեցության հակառակ՝ ուրիշի խնամքի տակ լինելու տրամադրությունների աղբյուր է դարձել:

Նշված բնութագրումները ընկած են քաղաքական մշակույթի հիմքում եւ պայմանավորում են վերջինիս մակարդակը: Այստեղ առաջնային դեր է խաղում ամբողջատիրական համակարգից ժառանգած գիտակցությունը, որի աչքի ընկնող դրսևորումներն են. միակ, անվիճարկելի ճշմարտության հաստատումը եւ բոլոր կուսակցությունների մշտական ճիգերը՝ բռնի տիրանալ այդ ճշմարտությունն արտահայտելու իրավունքին: Ահ՛ա թե ինչու առայժմ չի գիտակցվում քաղաքական «խաղի» կանոններին հետեւելու անհրաժեշտությունը:

Քաղաքական մշակույթը շատ հարցերում դիցաբանված է. մենք առաջվա պես հավատում ենք արտաքին աշխարհի օգնությանը եւ առաջվա պես կասկածի տակ չենք առնում մեր քաղաքակրթական աստիճանը: Մենք չափազանց մեծ դեր ենք հատկացնում իշխանությանը, համարելով, որ այն ինքնին մեծ արժեք է ներկայացնում. սա էլ իմաստավորում է այդ իշխանության համար տարվող պայքարը: Քաղաքական կազմակերպությունները, հատկապես՝ նորաստեղծները, ձեւավոր-

վում են համապարտ երաշխավորության, այլ ոչ որոշակի գաղափարին նվիրված լինելու սկզբունքով: Բնական է, որ նման պայմաններում չի ապահովվում կարգապահության պատշաճ մակարդակը:

Այսօրվա քաղաքական իրավիճակը բխում է հասարակության կառուցվածքից, իսկ ավելի ճիշտ՝ կառուցվածքային խառնաշփոթությունից, հասարակական դերերի եւ, որպես վերջինիս հետեւանք՝ հասարակական սպասումների անորոշությունից: Զանի որ այս կամ այն անձնավորության, այս կամ այն կազմակերպության՝ իշխանության գլուխ անցնելը առնչվում է ազգային պայքարի հետ, այդ կազմակերպություններից եւ ինչ մեկը չի կարող համարվել հասարակության որեւէ խմբի շահերը ներկայացնողը:

Ինչպես ավանդական, այնպես էլ նորաստեղծ քաղաքական կուսակցությունները առայժմ չունեն իրական քաղաքական ուժ հանդիսանալու համար անհրաժեշտ սոցիալական հենքը, ընդ որում, եթե առաջինները շատ հարցերում չեն հասկանում տեղի հայության մտայնությունը, ապա վերջինների գաղափարախոսությունը բավականին էկլեկտիկ է: Սա է պատճառը, որ հասարակության դիրքորոշումը կուսակցական կառույցների նկատմամբ հիմնականում պայմանավորված է ոչ թե նրանց դիրքով, այլ սոցիալ-հոգեբանական այլեւայլ գործոններով: Այսպես, մեծ նշանակություն են ստանում կուսակցության ավանդական կերպարը, այս կամ այն անհատի դերը կուսակցական կառույցում եւ անգամ՝ կուսակցության անունը:

Բազմատարր եւ բազմադեմ ՀՀԸ-ն, աստիճանաբար կորցնում

է իր հեղինակությունը, իր՝ ազնիվ, անկաշառ, անշահախնդիր կազմակերպության նկարագիրը:

Ռամկավար Ազատական կուսակցությանը ներսից քայքայվելու վտանգ է սպառնում, եթե, իհարկե, նրա ադամների մի մասը, այն է՝ նախկին կոմկուսակցական գործիչներն ու նորահարուստները չհամակվեն այդ կուսակցության բովանդակային եւ գաղափարական հիմքը հանդիսացող՝ ազատական ոգով:

Դաշնակցության հայաստանյան գործունեության համար բախտորոշ դեր կարող է խաղալ նրա՝ ժողովրդի պաշտպան կուսակցության կերպարի եւ արժեզրկված սոցիալիստական գաղափարախոսության միջեւ եղած հակասությունը:

ԵՎ վերջապես, կուսակցություններից եւ ոչ մեկը հաշվի չի առնում բնակչության քաղաքական հագեցվածության, անգամ հոգնածության աստիճանը:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՋԱՐՅԱՆ,

փիլիսոփա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՓՈԽԼՈՒՄ

Քաղաքացիների հոգեբարոյական վիճակը պայմանավորվում է մի շարք տնտեսական, հասարակական եւ քաղաքական երեւոյթների ու իրադարձութիւնների անհատական ընկալմամբ եւ գնահատմամբ: Անկախ այդ երեւոյթների իրական էութիւնից ու նշանակութիւնից, անհատը կառուցում է իր վարքը, էլնելով այն արդյունքներից, որոնք ստանում է՝ վերամշակելով ու իմաստավորելով իր «տեսածն ու լսածը»: Ավելացնենք, որ վերամշակման արդյունքների վրա էապես ազդում են ինչպես անհատի նախորդ փորձն ու դիրքորոշումը, այնպես էլ այն արժեքները, որոնցով նա առաջնորդվում է այս կամ այն երեւոյթը գնահատելիս:

Նշված երեք՝ տնտեսական, հասարակական եւ քաղաքական ոլորտները, որպես անհատի հոգեբարոյական վիճակի վրա ազդող գործոններ, դիտարկվող ժամանակահատվածում հըստակոյրեն բաժանվում են երկու խմբի՝ ըստ այդ ազդեցութեան հոգեբանական «նշանի»: Տնտեսական եւ հասարակական գործոնները ակներեւաբար ունեն բացասական նշան, մեծապես պայմանավորելով դեպրեսիվ, անկումային հոգեվիճակն, «բարենպաստ» պայմաններ ստեղծելով անօգնականութեան, ապագայի նկատմամբ անվստահութեան, անգամ հուսալքութեան զգացումների առաջացման համար:

Տնտեսական գործոնի իրական բնութագիրը լիովին համընկնում է այդ գործոնի հոգեբանական ընկալման հետ՝ հանգելով պարզ ու անվիճելի մի բանաձեւի. «Կենսամակար-

դակը գնալով ընկնում է, կյանքը բոլոր առումներով՝ դժվարանում»:

Հասարակական հարաբերութիւնների ոլորտում մարդու հոգեբանական վիճակի վրա ազդում է թե՛ «բարեկամական-ազգակցական», թե՛ «արտաքին», բառիս լայն իմաստով՝ հասարակական փոխհարաբերութիւնների բնոյթը: Հիշյալ երկու շրջանակներում էլ նկատվում են լուրջ փոփոխութիւններ: «Բարեկամական» կապերի ոլորտում այդ փոփոխութիւնները միանշանակ չեն: Մի կողմից, նկատվում է հարաբերութիւնների որոշակի սառեցում, որն անհատի կողմից ընկալվում է որպես իրենից անկախ եւ նոյնիսկ՝ իր կամքին հակառակ տեղի ունեցող, լոկ արտաքին՝ քանակական փոփոխութիւն: Սա «ոչ մի դեպքում» չի նշանակում զգացմունքային (որակական) սառեցում, պարզապէս ազդում են «ժամանակ-տրանսպորտ-բեկումն...» գործոնները: Իրական, խորը թաքնված պատճառը՝ «Անհարմար է մարդկանց ծախսի տակ դնել», ասվում է միայն «օտարներին» կամ շատ մտերիմ, վստահելի անձանց:

Մյուս կողմից, ամեն մի ոչ գործնական, չպարտավորեցնող հանդիպման առիթ ներքուստ, հուզականորեն վերապրվում է շատ ավելի սրտառու ու գնահատվում է ավելի բարձր, քան նախկինում:

Հաշվի առնելով ազգակցական-բարեկամական կապերի եւ ոչ պաշտոնական հարաբերութիւնների ավանդական դերը հայերի կյանքում, կարելի է հասկանալ այսօր Հայաստանում լայն տարածում ստացած այն անարդյունավետ հասարակական երեւոյթը, երբ ձեռներեց մարդիկ շարունակում են

առաջվա պես «տեղավորել», «գործ տալ» իրենց մերձավորներից, մինչդեռ թվում էր, թե նախկինում հասկանալի էր սովորական նման վարքագիծը ի սեր բիզնեսի պետք է որ վերափոխվեր եւ ենթարկվեր կյանքի նոր պայմաններին: Իսկ պայմաններն անողորմ են, կյանքն իրենն է թելադրում, եւ գործի հաջողությունը իրոք պահանջում է հաշվի չնստել բարեկամական կապերի հետ: Սա գիտակցում են եւ՝ նրանք, ովքեր «տեղավորելու» հնարավորություն ունեն, եւ՝ նրանք, ովքեր «տեղավորվելու» կարիք ունեն: Այդպես իսկ նշմարվում են այս հողի վրա սպասվող անխուսափելի բախումները: Հոգեբանական ապրումների մակարդակի վրա խորանում են մեղավորության զգացումն ու ռացիոնալացումը: Վարքային մակարդակի վրա դա արտահայտվում է բարեկամական շրջանակի տրոհման ձեւով. առաջացնում են հետեւյալ տարբերակված խմբերը՝

ա) մերձավորներ, այսինքն՝ առաջին կարգի բարեկամներ եւ

բ) այլ բարեկամներ, ընկերներ, մտերիմներ եւ այլն:

(Ա) խմբում «կարողները» աշխատում են թեթեւացնել իրենց «մեղքը» նյութական օժանդակությամբ, իսկ «կարիքավորները» (խորացնելով իրենց զգացմունքների արտահայտչական կողմը)՝ աստվածացնելով «կերակրողին», ընդ որում, ցանկանալով հիմնավորել այս նոր հարաբերությունները, նրանք անընդհատ «արդարացուցիչ», «մեղմացուցիչ» հանգամանքներ են փնտրում իրենց եւ «ուներորդների» միջեւ նախկինում եղած հարաբերություններում: Այս ամենի հետեւանքով էլ ավելի է խորանում ազգակցական-բարեկամական հարաբերությունները:

րի զգացմունքայնությունը՝ ընկնելով դյուրագագացության առանց այն էլ պարարտ հողի վրա:

(Բ) խմբում գնալով ամրապնդվում է ռացիոնալացումը. կապերի անխուսափելի խզումը ստանում է նորանոր «բացատրություններ» ու նորանոր «օբյեկտիվ հիմնավորումներ»: Ներքին տանջալի վիճակից դուրս գալու ելքն է դառնում պրոյեկցիայի, հիպերբոլացման (չափազանցման) եւ արտամղման մեխանիզմների ակտիվ մասնակցությամբ տեղի ունեցող թշնամացումը: Հարաբերությունների սառեցումը բացատրելու համար բավական չէ ռացիոնալացումը (ժամանակ-տրանսպորտ-հեռախոս...), անհրաժեշտ է ավելի «լուրջ» պատճառաբանում, եւ որպես այդպիսին հանդես է գալիս նորածին թշնամանքը, որն ամենաընդհանրացած ձեւով արտացոլվում է «մարդիկ առաջ ուրիշ էին», «առաջ ընկերությունն անելը հեշտ էր» եւ այլ նմանատիպ բանաձեւերով:

«Այլ» մարդիկ դառնում են բացարձակապես անհետաքրքիր օբյեկտներ. նրանք ընկալվում են որպես վայրկեական շահ ստանալու հնարավոր աղբյուր, ընդ որում, գնալով ավելի քիչ է հաշվի առնվում, թե ինչպես (ինչ աստիճանի անբարոյական կամ հանցագործ ճանապարհով) կիրականացվի այդ «օտարի» շահագործումը: Անգիտակցաբար, անկասկած, տեղի է ունենում հետեւյալ անցումը. «Եթե մոտ ընկերոջս դավաճանել եմ, ինչո՞ր պիտի հոգամ այս անծանոթի մասին»: Գիտակցության մակարդակում նույն միտքը այսպես է «թարգմանվում». «Եթե նախկինում ամենամտերիմ բարեկամս իրականում, ինչպես պարզվեց, կարգին մարդ չէ..., եթե մի մարդ, որին այդքան օգնել եմ, անշնորհակալ գտնվեց... եւ այլն, ապա իմ կողմից

ամնվազն հիմնարություն կլինի անծանոթին, օտարին ձեռք մեկնել»:

Այսպիսի տրամադրվածությունից մինչև բացարձակ թշնամանք, անգամ հարձակողականություն, երբ առաջնորդվում ես «խաբիր, թե չէ դիմացինդ կխաբի», «ճնշիր, թե չէ դիմացինդ կճնշի» սկզբունքով, ընդամենը մեկ քայլ է:

Վերոհիշյալ դյուրագագությունը կրողը միեւնույն ժամանակ նույն այս հարձակողականությունը կրողն է. սրտամկիկ ֆիլմերից հուզվողն իսկ հաջորդ օրը կարող է կողոպտել, սպանել:

Լայն հասարակական հարաբերությունների արտաքին դրսևորումների անհատական ըմբռնումը նույնպես կարելի է ձեռավորել ընդհանուր կարճ բանաձեռով.

«Թեւ նոր իշխանությունների նորամուծությունները անհնար է հերքել, իմ առօրյա կյանքի ցավոտ կողմերը (կաշառակերություն, գողություն, անարդարություն եւ այլն) առայժմ չեն հաղթահարվել»:

Անկախ իրական պատկերից, սա է երեւոյթների անհատական ներքին վերամշակման ամենատարածված արդյունքը: Այժմ դիտարկենք հասարակության տարբեր խավերի կողմից արվող այն հետեւությունները, որոնք բխում են հիշյալ գնահատականից: Եւ այսպես, ի՞նչ հետեւության են գալիս՝

ա) ամենացածր եկամուտ ունեցողները եւ (լինի դա անձնական, թե օբյեկտիվ պատճառներով պայմանավորված) այն բարձրացնելու ոչ մի հնարավորություն չունեցողները.

«Հանրապետությունը ծանր վիճակում է, բողոքի ճանապարհին հարցի լուծում չկա: Պետք է համբերել եւ սպասել»:

բ) բնակչության մեծամասնությունը՝ եռանդուն, միջին տարիքի մարդիկ, որոնք լրջորեն են վերաբերվում ընտանիք պահելու անհրաժեշտությանը, կամ պարզապես չեն ցանկանում հաշտվել բավականաչափ փող չունենալու մտքի հետ, ընդ որում անկախ սեռից, նախկին կամ դեռ կիրառվող մասնագիտությունից, եւ անկախ այն բանից, թե ինչպիսին է եղել նրանց կենսամակարդակը մինչև «նոր ժամանակները».

«Կյանքը թանկանում է, եւ դա այն փաստն է, որը հնարավոր չէ շրջանցել: Փող ձեռք բերելու հնարավորությունները շատացել են, քանի որ դեռ գործող հին հնարքներին ավելացել են նոր՝ ազնիվ ձեւերը: Ուստի՝ պետք է միայն ճիշտ գնահատել իմ ծառայողական դիրքի առավելություններն ու դեռ չսեփականացված պետական յուրացնելու հնարավոր միջոցները եւ (կամ) զբաղվել վերավաճառքի որեւէ ձեռով»:

Այս դիրքորոշումը աստիճանաբար թմրեցնում է եռանդուն ու կարող մարդկանց, նրանց ձեռներեցության գազաթնակետը դարձնելով «գործ բացելը եւ ուրիշներին աշխատեցնելը»: Հատկանշական է, որ ոչ «գործ բացողները», ոչ էլ աշխատողները լուրջ ներքին ապրումներ չունեն, բացառությամբ, թերեւս, նրանց, ով «ափսոսանքով» է հիշում իր նախկին մասնագիտությունը:

գ) բնակչության փոքրամասնությունը կազմող, բայց եւ ներկա խնդիրների լուծման համար կարետրագույն նշանակություն ունեցող իրոք գործարար մարդիկ, նախկինում արտադրական եւ ծառայությունների կոոպերատիվներ ունեցողները, բարիք ստեղծելու թե՛ փորձ, թե՛ անհրաժեշտ կապեր ունեցողները.

«Այսօր ինձ սպառնացող լուրջ վտանգը չափազանց մեծ հարկերն են, այլ խնդիր չկա: Ծայրահեղ դեպքում կարող եմ անցնել վերավաճառքի»:

Այս մարդկանց Հայաստանը կորցնում է եւ՝ ֆիզիկապես, քանի որ նրանք ցանկացած պահին կարող են արտագաղթել, եւ՝ հոգեբանորեն, քանի որ նրանք աստիճանաբար այլասերվում են: Ասել է թե, եթե ցանկանում ես շարունակել արտադրանք տալ, ապա ստիպված պետք է խաբեբա դառնաս, իսկ եթե, արտադրության վրա խաչ քաշելով, վերածվում ես չարչիի, ապա փրկում չունես այն ծանր զգացումից, որ կարող էիր շատ ավելի օգտակար լինել, որ քո տեղում չես, չոր կամքիդ հակառակ զրկվում ես ազգի բարգավաճման գործին կարողություններիդ ներածին չափ մասնակցելուց:

Այսպիսով, տարբեր խավերի ներկայացուցիչները տարբեր ճանապարհներով գալիս են դեպի միեւնույն հոգեբանական վիճակը՝ անտարբերությունը:

«Հնարավորություն չունեն», «ավելին չեմ կարող», «արածս իմաստ չունի» եւ նման այլ դիրքորոշումները, ինքնագնահատականները, բնականաբար, չեն կարող նպաստել հասարակության զարգացմանը:

Երրորդ ուղրտը՝ քաղաքական կյանքը, միակն է, որն ունի ակնհայտորեն արտահայտված դրական «նշան», դրական ազդեցություն:

Նախ, աչքի է ընկնում Հայաստանում ներքին քաղաքական իրավիճակի կայունությունը, որը, մեր կարծիքով, պայմանավորված է հետեւյալ հզոր գործոններով՝

ա) դեռեւս թարմ է անկախության գաղափարի ոգետրիչ

ազդեցությունը:

բ) մշտական լարվածության շնորհիվ ներքին քաղաքական անդորր է ապահովում պատերազմը:

գ) տնտեսական քաղաքականության ոլորտից դրական նշանով հանդես են գալիս սեփականաշնորհման հետ առնչվող սպասելիքները:

Առաջին գործոնն աստիճանաբար «հնանում» է, ժամանակն է հաշվի առնելու «փողոցում» աճող դժգոհությունը: Մարդիկ չգիտեն, ինչ է անկախությունը: Բոլոր միջոցները պետք է գործադրվեն անկախության շոշափելի հետեւանքների եթե ոչ ստեղծման, ապա առնվազն մատուցման ուղղությամբ:

Երկրորդ գործոնը սկսում է հոգնեցնել, եւ կշարունակի դրական նշան կրել այնքան ժամանակ, քանի դեռ կլինեն խրախուսիչ նորություններ ճակատից:

Ղարաբաղյան շարժումը ի հայտ բերեց հայ ժողովրդի վերածննդի եւ միասնության ամենագոր, բայց եւ անհրաժեշտ պայմանը՝ համազգային գաղափարի կամ նպատակի առկայության անհրաժեշտությունը: Այլ գործոնները անձնական մակարդակի վրա քչերին են հուզում: Այսպես, օրինակ, «հայրենիքին սպառնացող վտանգը», որի հետ շատերը մեծ հույսեր են կապում, առայժմ առաջացնում է հայրենիքից ժամանակին փախչելու ցանկությունը: Բացի այդ, կա մի համոզվածություն, որ գոյություն ունեն ինչ-որ տղաներ, որոնք (կարետր չէ որտեղից) ի հայտ կգան եւ կանեն ինչ որ պետք է՝ կաշառպանեն հայրենիքը: Այս տրամադրությամբ մեծապես նպաստում են դրսից եկող զինված փրկարարների մասին բերանից բերան անցնող հեքիաթները: Ոչինչ չի արվում նշված

հարցում բնակչության անհրազեկությունը վերացնելու եւ այս կարեւորագույն թեման «լսել եմ, որ»-ի մակարդակից բարձրացնելու ուղղությամբ: Ազատամարտիկները «ինձանից» օտարացած մարդկանց մի խումբ է. «ես» նրանց հետ կապ չեմ զգում, նրանք մեր շարքերից չեն: Այս վիճակը իր մեջ կրում է պատերազմից օտարացվելու վտանգը: Որպես արդյունք՝ հաջողություններն «այնտեղ» ոչ «իմն» են եւ ոչ էլ «մերն» են - «գործընթացիմն» են:

Եթե այս տարի, <sup>1992</sup> համեմայն դեպս, մինչեւ աշուն, հասարակական իրավիճակը Հայաստանում մնալու է կայուն, ապա զգալի չափով շնորհիվ այն բանի, որ մարդիկ առատ բերք են ստանում սեփականաշնորհված հողից: Բայց ոչ ոք դեռ չի փորձել, առավել եւս պարբերաբար, բացատրել մարդկանց, թե ինչ սպասելիքներ է պետք ունենալ այդ ագրարային հեղափոխությունից: Հոսախաբությունը արդեն երեւում է հորիզոնում, սնվելով, դարձյալ ենթադրությունների մակարդակից չբարձրացող, հետեւաբար՝ ամենամշայլ գույներով ներկված խոսակցություններով գալիք ձմեռվա անհամեմատ ծանր պայմանների մասին: Վատ չէր լինի առաջարկել ընկերաբաններին ուսումնասիրել հասարակական կարծիքը հաջորդ տարվա վերաբերյալ, մասնավորապես, պարզել, թե բնակչության ո՞ր տոկոսն է արդեն իսկ հող նախապատրաստում՝ ձմեռը մեկ այլ տեղ անցկացնելու համար: Գալիք տարվա, հատկապես՝ ձմեռվա հարցը, անկասկած, իշխանությունների ուշադրության կենտրոնում է, սակայն բնակչությունն այդ մասին գրեթե անտեղյակ է: Մարդիկ պետք է ստույգ իմանան, թե ինչ հնարավորություններ ունենք, ինչը կկարո-

1992թ.

ղանանք կանխել, իսկ ինչն է անխուսափելի:

Կարծում եմ, որ քաղաքական կուսակցություններին անհրաժեշտ է վերանայել իրենց պայքարի միջոցների եւ վերջիններիս դրսեւորումների ձեւերը: Անկախ լրատվական միջոցները պետք է լինեն իրոք անկախ, իսկ կուսակցական թերթերը, կնշանակի նաեւ կուսակցությունները՝ կարողանան համաձայնության գալ, թեկուզեւ որոշ, բայց կարեւոր հարցերում: Այսօր սա անհրաժեշտ է, ուրեմն՝ հնարավոր:

ԳՈՒՐԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ,  
հոգեբան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ԸՆԿԵՐԱՅԻՆ- ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայաստանի բնակչության այսօրվա հոգեբարոյական վիճակը կարելի է բնորոշել որպես խցանում, գերարգելակում, երբ անցած են հոգեբանական զգայունակության ու հակա-ազդեցության հնարավոր սահմանները: Մեր կարծիքով, սա արդյունք է հետեւյալ երեք փոխկապակցված պարագաների: Ղարաբաղյան իրադարձություններով պայմանավորված հոգեբանական ակտիվության թռիչքին հետեւեց որոշակի անկում: Այնուհետեւ տեղի ունեցավ էլ ավելի կտրուկ անկում (երկրաշարժ), որը տեղի տվեց նախ՝ որոշ վերելքի (սպասվող օգնություն) եւ ապա՝ նոր, աստիճանաբար խորացող հիասթափությանը (շուկայական հարաբերությունների ձեւավորում): Ինչպես տեսնում ենք, երեք դեպքում էլ թռիչքն ու անկումը հաջորդել են իրար, ընդ որում վերջինիս բնակչությունը այլեւս չի արձագանքում. սովորական է դարձել: Նման իրավիճակը կարող է պայմանավորել ինչպես ցանկացած հոգեբանական ճնշման սաստկացումը, այնպես էլ բնակչության պատրաստակամությունը՝ հետեւել նրան, ով ցույց կտա ճնշումը թուլացնելու ուղին:

Եթե 1990 թ. կեսերին հիասթափություններից պաշտպանվելու հոգեբանական միջոցները դեռ գործում էին, ընդ որում ճնշվածության մակարդակը ԱՄՆ-ի եւ Կանադայի բնակչության համապատասխան ցուցանիշից մեկ կետ ցածր էր, ապա վերջին ձմեռվա ընթացքում դրանք գրեթե լիովին սպառվեցին: Հոգեբանական անկման ընթացքի մասին է վկայում նաեւ բնակչության հետաքրքրությունների ուղղվածությունը. 1991 թ., Հայաստանի Գերագույն խոսիողի ընտրություններից առաջ,

լուծման եմթակա համար մեկ խնդիրը Ղարաբաղյան հիմնահարցն էր, որից հետո միայն նշվում էին քաղաքական եւ տնտեսական բարեփոխումները, մինչդեռ պրեզիդենտական ընտրարշավի ժամանակ առաջին տեղում տնտեսական վերափոխումներն էին, ապա՝ քաղաքական եւ միայն երրորդ տեղում՝ Արցախի հարցը: Երիտասարդությունը հոգեբարոյական առումով շփոթության մեջ է, քանի որ ապագան մշուշապատ է, իսկ այսօրվա բարոյական օրյեկտիվ չափանիշը՝ Արցախի պաշտպանությանը մասնակցելը, թե՛ հոգեբանորեն, թե՛ ֆիզիկապես անհասանելի է: Նման պայմաններում ձեւավորվում է յուրահատուկ «Ղարաբաղյան սինդրոմ»՝ ռազմական գործողություններին չմասնակցելու հետեւանքով առաջացած անլիարժեքության կոմպլեքս:

Գործարար մարդիկ աստիճանաբար ձեռք են բերում մեկ այլ՝ վախի կոմպլեքս, քանի որ պետությունը, ներկա փուլում ի վիճակի չլինելով ապահովագրելու նրանց գործարքները, փաստորեն, հանդես է գալիս ոչ այնքան հովանավորի, որքան ճնշողի դերում: Իշխող վերնախավը առայժմ չի առաջարկել մի այնպիսի հեռանկարային ծրագիր, որը կարելի լիներ ներկայացնել որպես «բաբելոնյան գերությունից» ազատվելու միջոց:

Այսօր Հայաստանի ընկերային կյանքը բնորոշող երեւոյթներից մեկն այն է, որ բնակչության մի մասը մի կողմ է կանգնել քաղաքական գործընթացից եւ լավագույն դեպքում հանդես է գալիս դիտորդի դերում: Սա կարող է սխալ տպավորություն ստեղծել քաղաքական ուժերի հարաբերակցության մասին, քանի որ, տալով «զանգվածների քաղաքական շահագրգռվածության» կարծեցյալ մի պատկեր, թույլ է տալիս վկայակոչել «զանգվածներին» ամեն անգամ, երբ այս կամ

այն քաղաքական գործչին պետք է լինում մասնավոր տեսակետին համընդհանուր բնույթ տալ:

Ժողովրդական կառույցների եւ լծակների բացակայությունը բացառում է քաղաքական պայքարի կոնստրուկտիվ ազդեցությունը ազգային խնդիրների լուծման գործում: Զաղաքական կուսակցությունները ավելի շատ խմբավորումներ են հիշեցնում, այդ իսկ պատճառով Գերագույն խորհուրդը իր խնդիրը չի կատարում, հատկապես՝ ընդհանուր քաղաքական գիծը մշակելու հարցերում: Գերագույն Խորհրդի հանձնաժողովները, որոնք կոչված են վերահսկելու գործադիր իշխանության աշխատանքը, փաստորեն, չեզոքացված են: Տեղից չի շարժվում նաեւ դատական համակարգի վերափոխումը, իսկ Գերագույն դատարանը դիտվում է որպես սովորական, այլ ոչ վերադաս ատյան: Զորքերի իշխանությունը (մամուլը, ռադիոն եւ հեռուստատեսությունը) լավագույն դեպքում անօգուտ հարվածներ է հասցնում, մինչդեռ եզակի լուրջ ելույթները ուշադրության չեն արժանանում, քանի որ չեն գործում հասարակական կարծիքի, զանգվածային լրատվական միջոցների եւ իշխանության փոխկապակցման եւ փոխազդեցության մեխանիզմները:

Ինչ վերաբերում է քաղաքական գործընթացին, ապա այն հիմնվում է, մի կողմից, նախագահի անձի, մյուս կողմից՝ դեռ նախկին իշխանությունների օրոք սերմանած եւ խոր արմատներ տված վախի վրա, որն արգելակում է բնակչության եւ իշխող կուսակցության արդյունավետ համագործակցությունը: Բացի այդ, առայժմ գործում են նաեւ իշխանության նախկին կառույցները, ընդ որում հենց այն կառույցները, որոնք առաջին հերթին պետք է վերափոխված լինեին:

Տեղերում իրավիճակը ավելի պարզ է: Գիտակցելով, որ

սովորական ընտրությունների դեպքում իշխանությունը կմնա կոմունիստների եւ կոլխոզ-սովխոզային ղեկավար վերնախավի ձեռքում, իսկ դա անթույլատրելի էր, քանի որ «ՀՀ-ացած» Երեսանը կպաշարվեր կարմիր գույները պահպանած շրջաններով, «նոր ժողովրդավարները» արեցին ամեն ինչ՝ իրադարձությունների նման զարգացումը կանխելու համար: Ղեկավար պաշտոնները գյուղերում ի վերջո բաժանվեցին Երեսանից նշանակված վստահելի անձանց եւ ժամանակին «ճիշտ» կողմնորոշված նախկին ղեկավարների միջեւ: Այսպիսով, գյուղի իշխանավորները ձեռք էին բերում «համագործակցության» երկու հնարավոր տարբերակ. մերվել, ստեղծելով նոր մաֆիոզ խմբավորումներ, կամ հակադրվել, թուլացնելով կառավարման լծակները:

Այսօր տնտեսությունը շարունակում է քաղաքականության պատանդը մնալ, եւ սա առաջին հերթին վերաբերում է գյուղատնտեսությանը: Կոլխոզ-սովխոզային համակարգի ջախջախումը, միանգամայն առաջադիմական նպատակներ հետապնդելով, այնուամենայնիվ գյուղը վերածեց անպաշտպան տրոհված տնտեսությունների: Մեր կարծիքով, այս դժվարությունը, որն, ի դեպ, բնորոշ է բոլոր նախկին խորհրդային հանրապետություններին, կարելի է հաղթահարել, ստեղծելով երկարաժամկետ պետական օժանդակության ծրագրեր եւ այդ ծրագրերը իրականացնելու համար անհրաժեշտ կառույցներ:

Զի բացառվում, որ նման մի փորձ կղրվի նաեւ արդյունաբերության բնագավառում: Արդեն նախատեսվում է հիմնարկ-ձեռնարկությունների մի մասի վաճառքը: Կարող է ստեղծվել մի այնպիսի իրավիճակ, երբ նոր ձեռնարկատերերը, ծախսելով հսկայական գումարներ, կգրկվեն այն միջոցներից, որոնք

անհրաժեշտ են լինելու արտադրությունը ժամանակակից անիվների վրա դնելու համար: Թերեւս, ավելի արդյունավետ կլիներ ապագա գնորդներին թողնել իրենց գումարները, պարտադրելով միեւնոյն ժամանակ օգտագործել այդ միջոցները՝ արտադրական հզորությունների պատշաճ մակարդակը ապահովելու համար:

Որպեսզի արդյունաբերության բնագավառում չկրկնվեն գյուղատնտեսության ասպարեզում գործած սխալները, անհրաժեշտ է նախապես, պետական ունեցվածքի սեփականաշնորհումը սկսելուց առաջ, ստեղծել այնպիսի կառույցներ, որոնք կապահովեն բնակչության սոցիալական պաշտպանվածությունը:

Մեր կարծիքով, հանրապետության առջեւ ծառացած խնդիրների բարդությունը պայմանավորված է ոչ թե հնարավորությունների, ներուժի բացակայությամբ, այլ այդ հնարավորություններից, այդ ներուժից ճիշտ օգտվելու ընդունակության բացակայությամբ: Մեր քաղաքական հոգեբանության հիմքում ընկած է համայնքային ինքնակառավարման հակումը, որը, սակայն, ենթադրում է հզոր արտաքին իշխանության առկայություն: Հենց այս համայնքայնությունն է մեր ժողովրդավարության առանձնահատկությունը եւ մեր՝ ժողովրդավարության ու քաղաքացիական հասարակության պայմաններում ապրելու այսօրվա անընդունակությունը: Ազգային քաղաքական հոգեբանության այս հիմքերից պետք է ելնենք մենք, շարժվելով դեպի արդար հասարակություն տանող անվերջ ճանապարհով:

ԱՆԱՐՈՆ ԱՂԻԲԵԿՅԱՆ,  
ընկերաբան